



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 հոկտեմբերի 2016թ. թիվ 325-Ա

Մ.ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻՆ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱԶՈՐԻ
Ե.ԶԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ N 12 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին կետի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետով, հաշվի առնելով Մ.Հովակիմյանի դիմումը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. Մարինե Հովակիմյանին նշանակել «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Ե.Զարենցի անվան N 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչև օրենքով սահմանված կարգով մրցույթի արդյունքում նոր տնօրենի ընտրությունը և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր:

2. Մարինե Հովակիմյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հոկտեմբերի 14-ից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

2016թ. հոկտեմբերի 13
ք.Վանաձոր

Ռ.Ե. Երևան

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ